

ՓԵՏՐՎԱՐ 2022

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում .....	8
1.3. Ջրահեռացման համակարգ .....	9
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	10
1.5. Էներգահամակարգ .....	10
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	11
<b>2. Առևտրային տնօրինություն</b> .....	<b>12</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	13
2.2. Հասույթ .....	13
2.3. Գանձում .....	14
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	15
2.5. Ջրաչափեր .....	16
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	17
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>18</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	19
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	20
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	23
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	23
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	27
3.6. 1-85 թեժ գիծ .....	28
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>29</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>32</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	33
5.2. Համագործակցություն ՀՀ ԱԲՆ-ի, Երևանի քաղաքապետարանի, մարզպետարանների և տիմերի հետ .....	33
5.3. Դասընթացներ/սեմինարներ .....	33
5.4. Բուժզննում .....	35
5.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	35

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### Քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան

● Արարատի մարզի Դիտակ համայնքը սնող  $d=100$ մմ և  $d=150$ մմ պողպատե և թուջե ջրագծերը գտնվում էին քայքայված վիճակում, հաճախակի էին կրկնվող վթարները, առկա էր ջրակորուստ: «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Դիտակ համայնքում կառուցվել են  $d=160$ մմ  $L=450$ գծ/մ և  $d=110$ մմ  $L=450$ գծ/մ պոլիէթիլենային ջրագծեր և թվով 2 դիտահոր: Տեղադրվել են  $d=100$ մմ 2հատ,  $d=80$ մմ 1հատ և  $d=50$ մմ 2հատ ճնշման կարգավորիչ փականներ թվով 5 փողոցները սնող ջրագծերի վրա: Փոխարինվել են բոլոր միացման կետերի պոլիէթիլենային գոտի միացումները:

Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել են  $d=100$ մմ և  $d=150$ մմ  $L=900$ գծ/մ երկարությամբ խողովակները, տնտեսվել է  $Q=4$  լ/վրկ ջրաքանակ, բարելավվել է Դիտակ և Ջրաշեն համայնքների ջրամատակարարումը:



### «Հարավ» տեղամասի սպասարկման տարածք

● Տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Արարատյան 1-ին  $d=1000$ մմ պողպատե ջրատարը գտնվում էր քայքայված վիճակում, առկա էին վթարներ, ինչի հետևանքով հետագա շահագործման համար պիտանի չէր:

«Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է  $d=1000$ մմ  $L=20$ մ ջրագիծ, որը միացնում է Արարատյան 1-ին ջրատարը Արարատյան 3-րդ ջրատարին: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է Արարատյան 1-ին ջրատարի  $d=1000$ մմ  $L=780$ մ քայքայված հատվածը և գործարկվել Արարատյան 3-րդ ջրատարը:



## Մարզ Արարատ

● Արարատ մարզի Տափերական գյուղի Շահումյան, Գայի և Իսակով փողոցների ջրագծերը, որոնք կառուցված էին 1960-ական թվականներին  $d=100$ մմ թուջե խողովակներով և 2000թ. փոխարինվել էին պոլիէթիլենային անորակ խողովակներով, քայքայվել և շարքից դուրս էին եկել և պիտանի չէին հետագա շահագործման համար: Հաճախակի էին կրկնվող վթարները, որոնք առաջացնում էին ջրի պղտորվածություն, իսկ ամռան ամիսներին գրանցվում էր ջրի ճնշման անկում:

«Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել են  $d=110$   $L=410$ զճ/մ,  $d=90$ մմ  $L=270$ զճ/մ,  $d=75$ մմ  $L=242$ զճ/մ նոր ջրագծեր: Տեղադրվել է թվով 13 ջրաչափական դիտահոր, փոխարինվել են թվով 68  $d=20$ մմ անհատական միացումներ ընդհանուր  $L=360$ զճ/մ երկարությամբ: Կատարված աշխատանքների արդյունքում ապահովվել է բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացել են գաղտնի վթարները, խնայվել է  $Q=6$ լ/վրկ ջրաքանակ, երկարացվել է ջրամատակարարման ժամային գրաֆիկը:



● *Արարատ մարզի* Ոսկետափ գյուղի Երկաթուղայինների, Գ. Նժդեհի և Մուսալեռ փողոցների  $d=50-100$ մմ թուջե և պողպատե ջրագծերը գտնվում էին քայքայված և վթարային վիճակում: Ջրագծերը անցնում էին տնամերձ հողամասերի և տների տակով, ինչը դժվարեցնում էր վթարների հայտնաբերումը և վերացնելը:

Տեղամասի աշխատակիցների կողմից նոր հետագծով կառուցվել են  $d=20$ մմ-90մմ տրամաչափերի  $L=2143$ զճ/մ ընդհանուր երկարությամբ նոր պոլիէթիլենային ջրագծեր:

Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է մատակարարվող ջրի որակը, բացառվել են ապօրինի միացումները, տնտեսվել է  $Q=5$ լ/վրկ ջրաքանակ:



### ● «Վեղի» հենակետային Փոքր Վեղի

Մխ.Սպարապետ, Իսակով և Շիրազի փողոցների  $d=50$ մմ պողպատե հին ջրագծերը փոխարինվել են  $d=63$ մմ և  $d=50$ մմ  $L=685$ զճ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային նոր ջրագծերով:  $d=20$ մմ պոլիէթիլենային խողովակներով փոխարինվել են  $L=190$ զճ/մ ընդհանուր երկարությամբ անհատական միացումներ:

## Մարզ Արմավիր

● *Մրգաշատ համայնքի* 16 փ. 1 նրբ. հասցեն սնող ջրագիծը, որը կառուցվել էր 1960-70-ական թթ-ներին, երկար շահագործումից քայքայվել էր, գտնվում էր անմխիթար վիճակում և հետագա շահագործման պիտանի չէր: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարավերականգնողական աշխատանքներ կատարելու ժամանակ

իրականացվել է նախկին  $d=76$ մմ,  $L=130$  գծ/մ քայքայված թուջե ջրագծի փոխարինում նոր  $d=63$ մմ պոլիէթիլենային ջրագծով, ինչպես նաև փոխարինվել են թվով 6 բաժանորդի խիստ վթարային վիճակում գտնվող պողպատյա մուտքագծերը մետաղական խողովակներով, որից թվով 4 բաժանորդների ջրաչափական սարքերը դուրս են բերվել սեփական տարածքից դուրս սահմանագատման կետ:



### Մարզ Սյունիզ, քաղաք Կապան



● «Կապան» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել են Շահումյան փողոց 9-29 շենքերի քայքայված, շարքից դուրս եկած մուտքագծերը: Տեղադրվել են են  $d=50$ մմ  $L=257$ գծ/մ,  $d=63$ մմ  $L=45$ գծ/մ և  $d=40$ մմ  $L=53$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներ և  $d=50$ մմ,  $d=40$ մմ և  $d=32$ մմ թվով 8 փականներ: Իրականացված աշխատանքների արդյունքում բարելավվել է շենքերի ջրամատակարարումը:



● Ագարակ քաղաքի ջրամատակարարումը, որն իրականացվում է Այրի Չայ-Ագարակ մաքրման կայանից  $d=500$ մմ ջրատարով, խաթարվել էր: «Մեդրի» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է, որ վթարվել է  $d=500$ մմ ջրատարի բարդ ռելիեֆային տեղանքով անցնող հատվածը և ջրի կորուստը կազմում է մոտ 15-20լ/վրկ: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարը վերացվել է և վերականգնվել է Ագարակ քաղաքի ջրամատակարարումը:



Փետրվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1572
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	48645
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	31910
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	13482
Ջրաչափական հանգույններ ուսուճաստիություն, սխեմաների կազմում	հատ	161
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2334.3
Կառուցված ջրագիծ	մ	4475
Կառուցված կոյուղագիծ	մ	167.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	21
Փոխարինված փական	հատ	81
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	323
Մաքրված դիտահոր	հատ	725
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	7.9
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1025
Ջրահեռացման ցանցում	հատ	2075
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	208

Փետրվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	607	888	428

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԵՎ ՓՈՒՍԱՐԻՆՈՒ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է փետրվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	104	10	0	1	0	0	0	0	0	115
Փոխարինված	228	18	5	2	2	7	0	0	0	262
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	83	17	3	0	2	3	1	0	1	110
Ընդամենը	415	45	8	3	4	10	1	0	1	487

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 487 ջրաչափ: Կատարված աշխատանքների 85 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:



### 1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Փետրվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1280	221	6
2	Սաշոոց	1520	209	24
3	Շահումյան	1780	161	41
4	Զեյթուն	620	280	0
5	Շիրակ	510	390	21.5
6	Արթիկ	100	75	0
7	Ապարան	0	29	0
8	Ալավերդի	2390	25	30
9	Աշոցք	0	8	0
10	Բերդ	0	11	6
11	Իջևան	140	36	0
12	Լոռի	3550	189	0
13	Նոյեմբերյան	0	15	0
14	Սպիտակ	0	15	0
15	Ստեփանավան	0	21	13
16	Թալին	0	19	0
17	Տաշիր	230	7	0
18	Չարենցավան	750	84	6
19	Աբովյան	2550	84	0
20	Հրազդան	1250	97	6
21	Կենտրոն	0	196	0
22	Հյուսիս	0	196	0
23	Հարավ	0	331	8
24	Էրեբունի	0	153	0
25	Արմավիր	0	119	0
26	Արտաշատ	0	82	0
27	Էջմիածին	0	96	0
28	Աշտարակ	0	28	0
29	Արարատ	0	77	13
30	Մասիս	0	66	0
31	Գավառ	354	16	0
32	Սևան	360	57	0
33	Մարտունի	0	23	0
34	Վարդենիս	410	16	0
35	Ճամբարակ	40	15	0
36	Դիլիջան	0	35	0
37	Վայք	0	14	0
38	Եղեգնաձոր	100	12	0
39	Զերմուկ	0	36	0
40	Սիսիան	60	45	6
41	Գորիս	0	44	0
42	Կապան	294	87	0
43	Մեղրի	100	43	24
	Ընդամենը	18388	3763	204.5

## 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ.սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել է հետևյալ աշխատանքները:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում ավագորսիչներից մեկի հորիզոնական կոնվեյերի սկզբնամասում ջրի արտահոսք էր առաջացել: Խծուծը և ներդիրները փոխարինելուց հետո այժմ այն աշխատում է անխափան: Զննվեցին նաև հորիզոնական կոնվեյերի պոլիէթիլեն պատյանները:

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում փոխարինվեցին օդամուղի ռոտորի ածխե թիակները և օդի ֆիլտրերը: Կատարվեց նաև մանր ճաղավանդակի քերիչ սանրերի կարգաբերում:

- Մարտունու կեղտաջրերի մաքրման կայանում գննվեցին հորիզոնական կոնվեյերների պոլիէթիլեն պատյանները: Զննվեցին նաև բոլոր շարժիչները և ռեդուկտորները ինչպես նաև կարգաբերվեցին քերիչ սանրերը:

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանի պոմպի բանվորական անիվը կրկին խցանվել էր և ջուր չէր մղում: Արդյունքում պոմպը դուրս բերվեց հորից և մաքրվեց: Խցանվել էին նաև հակադարձ փականները որոնք ևս մաքրվեցին:

- Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

- Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	68,334	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	55,971	18
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	157,533	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	66,845	5.4
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	111,701	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	8,212	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	8,623	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	11,200	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	28,400	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	82
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	12
Պոմպի տեղադրում	2
Պոմպի ապամոնտաժում	2
Պոմպի վերանորոգում	1

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Փետրվար ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար փետրվար ամսվա ընթացքում նորոգվել է թվով 2 մեքենայի շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 3 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ստամանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Փոխարինվել են թվով 46 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 16 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 10 մեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:

Թվով 4 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 2 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուռի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 4 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 5 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 2 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Եռակցման աշխատանքներ են իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.03.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 572,052 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. փետրվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	669,561	546,524	81,6
	Իրավաբանական անձ	30,365	25,528	84,1

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	732,861	567,125	77,4
	Իրավաբանական անձ	35,709	24,977	69,9

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 572 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Փետրվար ամսվա ընթացքում ստուգաչափվել է 2688 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 02.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1074	1225	184	2483
	Իրավաբանական անձ	70	119	16	205
	Ընդամենը	1144	1344	200	2688

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ փետրվար ամսին փոխարինված 2688 ջրաչափերի մոտ 57%-ը (կամ 1544 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 180,983 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Փետրվար ամսին գանձումը կազմել է 1,988 մլն դրամ (95 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի

շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Մակայն, հաշվի առնելով աշխարհում այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը փետրվար ամսին գերծ է մատչել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Փետրվար ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 392 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 37,1 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10777	1213381515	7047	686250708	158	20991281	3627	517713729	4100	421707631

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 65 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.03.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,660	2,054
Բնակիչ-բաժանորդներ	6,368	1,367
Իրավաբանական անձեր	2,292	687

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 310.3 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.03.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	700,272	565,571	80.76	34,603	24,969	72.16
	Առանց ջրաչափի	32,589	1,554	4.77	1,106	8	0.72

Տվյալների բազայում 01.03.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	871,885	398,107	45.66	38,412	10,931	28.46

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:  
 Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2703 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 537 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:  
 Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:



ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2375	1947	81.9
գ.Պոռշյան	1608	1080	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5907	1859	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Միսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 10695, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 10115, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1569, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2269, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1468, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2321 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4105 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	106	44,308	8,336,674

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի փետրվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.7%, ինչը 0.5% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 74 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների ցանկը և դրանց գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի փետրվար ամսին, 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 163 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 24 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի ծախսն Երևան քաղաքում նվազել է 8 825 ԿՎտ/ժ. (1.87%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)







Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ այս տարի նոր պոմպակայանների թիվն ավելացել է 7-ով և 4772 կՎտ:

Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

#### Ուսումնասիրված հասցեներ


Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 87 հասցեների էլ. հաշվիչների գույքագրում և ընթերցում: Թվով 4 ՕԿՁ-ում կատարվել է գույքագրման աշխատանք.

- ▶ Արարատի ՕԿՁ- էլ.հաշվիչի փոխարինում:
- ▶ Թվով 22 հասցեներում կատարվել է հոսանքի պարամետրերի ստուգում, պոմպակայանի զննում, թերությունների հայտնաբերում:
- ▶ Պոմպակայանների հոսանքի ծախսի գրաֆիկների ուսումնասիրության արդյունքում թվով 5 պոմպակայանում հայտնաբերված խնդիրները վերացվել են:




● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների էլ. էներգիայի ծախսը նվազել է 890.84կՎտ/ ժամ 4.1% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Էջմիածին



● Գյումրի քաղաքում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 8136 կՎտ/ժամ 24%` անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Շիրակ



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

### Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 25 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 10 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 376 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 250 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

### Ինվերտորների տեղադրում

● Հինգ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:


### Ինվերտորային պոմպի տեղադրում

● Երեք հասցեներում նախկին մաշված պոմպերի և ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերի փոխարեն տեղադրվել են նոր ինվերտորային պոմպեր:

### Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա

● Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 12,916կՎտ.ժ կամ 9.29%:

Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 20 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա

● 2022 թվականի փետրվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 7 245 ԿՎտ/ժամ (0,76%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:



Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա

● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը ավելացել է 13 398 ԿՎտ.ժ/ ամիս կամ 0,76%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 101 613 ԿՎտ.ժ կամ 2,71 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են փետրվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Գյուղերի և քաղաքների տվյալների բազաների ստեղծում ինչպես նաև հիդրավլիկ մոդելավորման բազայի ստեղծում	Գյուղեր և քաղաքներ	29
Երևան քաղաքի ջրագծերի և կոյուղագծերի քարտեզագրում	համայնք	9
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	94
Սիսիան քաղաքի կոյուղագծերի թվայնացում	կմ	50.333
Մարգային կոյուղու երկարությունն այս պահին փոփոխված տարբերակով	կմ	1482.012
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1762.7
Համայնքների թեմատիկ շերտերի թվայնացում, տվյալների բազայի լրացում	համայնք	5
Smart Monitoring խմբի հայտնաբերված վթարների բազավորում և թվայնացում:	բազա	1
Ցայտադրյունների տվյալների մուտքագրում ԱՏՀ-ում և բազայի լրացում	ցայտադրյուն	524
Երևան քաղաքի ԱՏՀ-ում առկա ջրագրկվող գոտիների տեքստային տարբերակների նախապատրաստում	քաղաք	1
Ֆիզիկական բաժանորդների կետերի ուղղում	կետեր	5465
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	482
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	5
Երևան քաղաքի տեղամասերի կողմից սպասարկվող համայնքների ջրագծերի թարմացումներ	համայնք	5
Երևան քաղաքի տեղամասերի կողմից սպասարկվող մերձակա գյուղերի քարտեզների տպում	քարտեզ	14
Տեխնիկական պայմանների տվյալների հիման վրա նոր բաժանորդների ջրագծերի թարմացում	տեղամաս	9
Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում ՕԿՁ-ների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում, լրացում և ճշգրտված տվյալների մուտքագրում	մարզ	3

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

#### Արզական-Չովունի ջրատար

Նախկին «Փոքր Միեր» կրթահամալիրի մոտակայքում՝ D=900մմ թուջե խողովակի վրա, առաջացել էր վթար՝ ~5լ/վ մեծությամբ: Վթարը վերացվել է «Մաշտոց» ՇՏ-ի ուժերով: Վթարը կանխվել է սեղմակի միջոցով:



#### Գառնի-Արտաշատ ջրատար

Ջրատարի D=600մմ հատվածում՝ Գառնու Ձորում, առաջացել էր վթար ~20լ/վ մեծությամբ: Վթարը կանխվել է Արտաշատ ՇՏ-ի կողմից:

### Արարատյան ջրատար

Նախորդ տարվա ընթացքում ձեռնարկված աշխատանքների և փորձարկումների արդյունքներից էլնելով կազմակերպվել է վթարային հատվածի անջատման և փորձարկված խողովակաշարերի միացման աշխատանքներ: Փոխարինվել է 730գծ.մ, D=1000մմ տրամագիծ: Փոխարինումից հետո կատարվել են ջրատարի լվացման աշխատանքներ:



Ջրատարի լվացման ընթացքում առաջացել են 2 վթարներ, որոնք վերացվել են «Մասիս» ՇՏ-ի ուժերով:

Ընթացիկ ամսում կատարվել են շրջայցեր տարբեր ջրատարների վրա, որոնց ընթացքում հայտնաբերվել են մանր վթարներ: Այդ մասին տեղեկացվել է շահագործման տեղամասերին:

### Գոտիավորման աշխատանքներ

#### Քաղաք Գյումրի

● Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան 8ա շենքը սնուցող ջրագիծը: Վերջինս, լինելով պոմպով սնուցվող շենք, պոմպի աշխատանքի ժամանակ չէր կարողանում ապահովել համապատասխան ճնշում և հանդիսացել էր բազմաթիվ բողոքների առիթ: Ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ շենքը սնուցող D=50մմ պողպատե ջրագծի վրա առկա է գաղտնի վթար: Ջրագծի քայքայված և շահագործման համար ոչ պիտանի լինելու պատճառով այն փոխարինվել է նոր D=40մմ ՊԷ L=10մ խողովակով՝ ապահովելով կայուն ջրամատակարարում: Տնտեսվել է Q ≈ 1-1,5 լ/վ ջրաքանակ:



#### Գյուղ Վարսեր

● Վարսեր գյուղ գնացող ջրագծի վրա իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար D= 1000մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 4լ/վ ջրաքանակ:





## Գյուղ Բաղրամյան

● «Արմավիր» ՇՏ աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատակիցների արդյունքում Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղում հայտնաբերվել է 4 վթար: Հայտնաբերված վթարների վերացման արդյունքում տնտեսվել է ընդհանուր  $Q = 12$ լ/վ ջրաքանակ, ինչի արդյունքում կարգավորվել է Բաղրամյան գյուղի ջրամատակարարման ցանցը:




## Քաղաք Երևան



● «Կենտրոն» ՇՏ աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար  $D=400$ մմ թուջից միացված  $D=200$ մմ պողպատե ջրագծի վրա դիտահորի պատի տակ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 7$ լ/վ ջրաքանակ:




● «Կենտրոն» ՇՏ աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար դատարանի մուտքի մոտ:  $D = 250$ մմ թուջից միացված  $D=50$ մմ հին պողպատե անհայտ միացումը խցափակվել է Կենտրոն ՇՏ կողմից: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 1$ լ/վ ջրաքանակ:



● «Կենտրոն» ՇՏ աշխատակիցների հետ Չարենց գոտու Քաջագունի փողոցում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է անհայտ ծագման վթարված  $D=250$ մմ պողպատե ջրագիծ, որը խցափակվել է Կենտրոն ՇՏ աշխատակիցների կողմից: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 5$ լ/վ ջրաքանակ:

● «Կենտրոն» ՇՏ աշխատակիցների հետ Կոմիտասի այգու մեջ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է անհայտ ծագման վթարված  $D= 32$ մմ պողպատե ջրագիծ, որը խցափակվել է տվյալ ՇՏ աշխատակիցների կողմից: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 2$ լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» ՇՏ աշխատակիցների հետ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 2 վթար Արտաշիայան 54 ՊԿ ելքի  $D = 100$ մ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 1.6$ լ/վ ջրաքանակ և էլեկտրաէներգիա:



● «Արաբկիր» տեղամասում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մամիկոնյանց 58 շենքի հարևանությամբ անցող  $D=250$ մ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 9$ լ/վ ջրաքանակ:

● «Շահումյան» ՇՏ-ի հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է տարիներ շարունակ առկա գաղտնի վթար Մեծարենցի փողոցով անցող  $D=50$  մ պողպատե ջրագծի վրա: Նաև խցափակվել է  $D=25$ մ անհայտ վթարված ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է  $Q = 1.5$ լ/վ ջրաքանակ:



● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար 11-րդ թաղամաս 15 շենքի դիմացով անցող  $D=140$ մ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 5$ լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված լայնածավալ վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են թվով 2 գաղտնի վթարներ Շարուրի փողոցով անցնող D=250մմ պողպատե ջրագծի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվել է ընդհանուր Q = 8լ/վ ջրաքանակ:



### 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և Խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

**Քաղաք Մասիսի** «Արարատյան 3/4» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել և մոնտաժվել են հեղուկ քլորի ջրագծերը:



**Քաղաք Արմավիրի** «Արմավիր» ՕԿՁ-ում տեղադրվել է հեղուկ քլորի կոնտեյների հենակ հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

**Քաղաք Վանաձորի** «Լեռնապատ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով տեղադրվել է հեղուկ քլորի կոնտեյների Alldos փական:



**Քաղաք Երևանի** Ավան, Բաբաջանյան 3/1 հասցեում հեղուկ քլորի կոնտեյներների համար լատունե խցանների մեջ վերանորոգվել և տեղադրվել են հատուկ ֆտորապլաստից ներդիրներ՝ հնարավոր ռիսկային դեպքերում հարցին մասամբ լուծում տալու համար:

**Քաղաք Գյումրիի** «Ղազանչի» քլորակայանում վերացվել է հիպոքլորիդի հաբի համակարգի գծի խցանված մասը, իսկ շարքից դուրս եկած դոզավորման պոմպը փոխարինվել է նոր վերանորոգված դոզավորման պոմպով՝ հիպոքլորիդի հաբի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:






**Քաղաք Չարենցավանի**  
 «Ֆանտան» քլորակա-  
 յանում վերանորոգվել  
 են քլորակայանի քլորա-  
 գծերը սարքավորման  
 անխափան աշխատանքն  
 ապահովելու նպա-  
 տակով:

### 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 29933 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 9845 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 7782 զանգ՝ 79.0%, իսկ մարզերինը՝ 2063 զանգ (21 %):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 20088 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 15493 զանգ (77.1 %), իսկ մարզերինը՝ 4595 զանգ (22.9%):

#### 185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր



- 2020թ. դեկտեմբեր ամսվա համեմատ՝ 2021թ. դեկտեմբեր ամսին 7,54 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 5,65 %-ով:
- 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 2021թ. դեկտեմբեր ամսին 44%-ով ավելացել է հայտարարությունների լուումը, 15%-ով՝ ֆիքսված զանգերի քանակը և 6%-ով՝ 5 րոպեից ավել զանգերի քանակը:
- 2021թ. փետրվարի համեմատ՝ 2022թ. փետրվար ամսին 10,35 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 5,50 %-ով:

	Ստորաբաժանում	2021 փետրվար	2022 փետրվար	
Առևտրային	Ընդամենը	10982	9845	-10.35%
	Երևան	8655	7782	-10.09%
	Մարզեր	2327	2063	-11.35%
	Շահագործում	21258	20088	-5.50%
	Հարավ	9528	7930	-16.77%
Շահագործում	Շենգավիթ	3254	1809	-44.41%
	Կենտրոն	1949	2219	13.85%
	Հյուսիս/Ավան Լոր Լորթ/	1386	1065	-23.16%
	Էրեբունի	940	700	-25.53%
	Պումպեր	499	400	-19.84%
	Մարզեր	1500	1737	15.80%
	այդ թվում կոյուղու վթար	46	41	-10.87%
	այդ թվում դիտահորի խցանում	3141	2302	-26.71%
	Հյուսիս	11730	12158	3.65%
	Արաբկիր	2950	3633	23.15%
	Քանաքեռ-Զեյթուն	985	952	-3.35%
	Մաշտոց	2398	2156	-10.09%
	Շահումյան	1666	2036	22.21%
	Պումպեր	679	523	-22.97%
	Մարզեր	3052	2858	-6.36%
այդ թվում կոյուղու վթար	85	68	-20.00%	
այդ թվում դիտահորի խցանում	4367	4530	3.73%	
	Ընդամենը	32240	29933	-7.16%

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու ամսին, որպես հրատապ թեմա, Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ շարունակաբար հանրությունը տեղեկացրել է առաջացող վթարների, դրանց պատճառների ու հետևանքների արագ վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին: Ընդ որում, այստեղ որպես ակնհայտ առաջընթացի պայմաններից մեկ նշվել է ՎեոլիաԹիմի մասնագիտական ունակությունները, պատասխանատվությունն ու ահագանգերին արագ արձագանքելու պատրաստակամությունը, որի ցայտուն օրինակ է Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի «Այրիչայ-Վարիավար» խողովակաշարի վերանորոգումը:



Այլ մոտեցում պահանջեց Արաբկիր վարչական շրջանում հաճախակի դարձած ջրանջատումների մասին հանրային իրազեկումը: Հաշվի առնելով, որ դրանք շոշափում են տասնյակ հազարավոր սպառողների կենսական շահերը, ՀԿԲ-ն տնօրինության հանձնարարությամբ ՋԼՄ-ների քանիցս ներկայացրել է պարզաբանում:

Այստեղ շրջադարձային հանդիսացավ Ադոնցի փողոցում նորակառույց խոշոր տարանցիկ ջրատարի միացումը գործող ցանցին, որը նույն օրը, բացի ընկերության digital միջոցներից, լուսաբանվեց Կենտրոն հեռուստատալիքով:

Հաշվի առնելով ձյան առկայությունը, քամիներն ու ցուրտ եղանակը, ՀԿԲ-ն շարունակաբար լուսաբանեց նաև ՎեոլիաԹիմի ջանքերը համակարգի ինժեներական կառույցների անխափան աշխատանքի ապահովման գործում: Հասկանալի պատճառներով առաջին հերթին լեռնային ջրաղբյուրների:

Տվյալ ուղղությամբ աշխատանքների օրինակ է սպասարկող անձնակազմի կողմից Ապարանի ջրաղբյուրի սանիտարական գոտու բոլոր 15 խորքային հորերի տարածքները

տեղացած առատ ձևից մաքրելը: Ներկայացվել է նաև Էլեկտրական համակարգերի կառավարման ծառայության մասնագետների կողմից ինժեներական կառույցների կայուն էլեկտրասնուցման ապահովումը, որը տեխնիկական տեսակետից դժվարին խնդիր էր: Մասնավորապես, նրանք սահմանվածից շուտ վերանորոգեցին ուժեղ քամուց վթարված «Հացառատի» պոմպակայանի տրանսֆորմատորը և վերականգնեցին Գավառ քաղաքի ու հարակից գյուղերի ջրամատակարարումը: Օգտվելով հերթական վթարից, ՀԿԲ-ն հանրությանն է ներկայացրել նաև Արմավիր ու Մեծամոր քաղաքներին հարակից 12 գյուղերով ջուր մատակարարող խորքային հորերի պոմպերի աշխատանքի կարևորությունն ու վերանորոգման դժվարությունները:

Ինչ վերաբերում է ջրամատակարարման բարելավման ծրագրերին, ապա ՀԿԲ-ն հարկ է համարել նշել, որ Վեոլիան առկա խնդիրները լուծելիս նախապատվություն է տալիս ոչ թե ջրաքանակի ավելացմանը, այլ նոր տեխնիկայի ներդրմանն ու տեխնոլոգիական լուծումներին: Այստեղ կարելի է նշել «Եղեգնաձոր» շահագործման տեղամասի կողմից քաղաքի մի շարք փողոցների բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման համար մղիչ պոմպ ունեցող նոր դիտահորի կառուցումը:

Հաջորդ հասցեն «Արարատ» ՕԿՋ-ի պոմպակայանն է, որն անցել է ինվերսիայի սկզբունքով աշխատանքի: Եթե նախկինում այստեղից Արարատի Ջող թաղամաս, Սուրենավան, Արմաշ, Երասխ գյուղեր ջուրը հասնում էր ֆիքսված քանակով, առանց ավելացնելու կամ պակասեցնելու հնարավորության, ապա հիմա, ինվերտորային համակարգի շնորհիվ, պոմպերը մղվող ջրաքանակը կարգավորում են ավտոմատ կերպով, ելնելով պահանջարկի փոփոխությունից:

Փետրվարին ընկերության սեփական միջոցներով նաև Ջրաշեն ու Դիտակ գյուղերի ջրամատակարարման կարգավորման համար «Գառնի-Երևան» ջրատարից կառուցվեց 900 գծամետր պոլիէթիլեն նոր ջրագիծ՝ դիտահորով: Այստեղ տեղադրված ՃԿՓ-ի միջոցով ցանցը դարձավ ավելի կառավարելի: Իսկ շահագործումից հանված 1700մ քայքայված ջրագիծը թույլ տվեց տնտեսել վայրկյանում 6-7 լիտր ջուր:

Լուսաբանելով համակարգում տեխնիկական նորամուծությունների թեման, ՀԿԲ-ն փետրվարին անդրադարձավ Իջևանի «Գետափնյա»



պումպակայանում 2 հետադարձ փականի փոխարինմանը, որով ընկերության համակարգում մեկնարկեց պոմպերի հեռակառավարման ծրագիրը: Այսուհետ, ինժեներական այս կառույցը հնարավոր կլինի կառավարել Երևանից, առանց սպասարկող անձնակազմի մասնակցության:

Փետրվարին շարունակվել է հունվարին ինֆոգրաֆիկայի տեսքով մեկնարկած հրապարակումները՝ ընկերության 2017-2021թթ. ձեռքբերումների վերաբերյալ: Այս անգամ խոսքը ջրամատակարարման բարելավման մասին է՝ Երևանում ու մարզերում, որը նոր ջրագծերի կառուցման, տեխնիկական նորամուծությունների ու ապօրինությունների դեմ պայքարի շնորհիվ ուղեկցվել է ջրի արտադրության ծավալների զգալի նվազմամբ:

Այսպիսով, ընթացիկ գործերը փետրվարին մեծ ծավալ են կազմել, սակայն դրանք չեն ստվերել համակարգում ապագային ուղղված աշխատանքները, որին անդրադարձել է ՀԿԲ-ն: Այսպես, Վեոլիան սկսել է «Արարատյան» աղբյուրից դեպի Երևան ու Մասիսի տարածաշրջանի բնակավայրեր մայրուղային խողովակաշարերի վերանորոգումն ու վերակառուցումը: Դրա շնորհիվ նախատեսվում է բարձրացնել «Խարբերդ» ՕԿՁ-ի արդյունավետությունը, որպեսզի հնարավոր լինի ամռան շոգերին ավելացնել այստեղից մղվող ջրաքանակը:

Այս ընթացքում հանրությանն են ներկայացվել բոլոր խոշոր ջրանջատումների, մրցույթների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները: Մշտապես թարմացվել է Veolia.am կայքը, [twitter.com/Veolia\\_AM](https://twitter.com/Veolia_AM) և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերը:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://www.veolia.am) պաշտոնական կայքում, [twitter.com/Veolia\\_AM](https://twitter.com/Veolia_AM) և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*





### 5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Բաժինը, ղեկավարվելով ընկերության գլխավոր տնօրենի 24 հունվարի 2022թ-ի N 02 Լ հրամանի և հրամանով հաստատված կարգի պահանջներով, Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման (ԲՌԿ) ստանդարտի պահանջներով հաշվետու ամսում մշակեց «Աշխատանքներ փակ տարածքներում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի վերաբերյալ դասընթացի պրեզենտացիայի նյութը:

● Բաժինը հաշվետու ամսում լրամշակեց «Ժամանակի կառավարման գործիքակազմ» թեմայով դասընթացի պրեզենտացիայի նյութը:

● Բաժնի կողմից կատարվեց անմիջականորեն ջրի մաքրման, վարակազերծման և ցանցի սպասարկման հետ առնչվող Ջրմուղների կառույցների աշխատողների, ինչպես նաև արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի փաստակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների համար 2022 թվականին նախատեսվող բժշկական զննության և հետազոտությունների անցկացման նախապատրաստական աշխատանքները և կազմեց դրանց իրականացման պլան-ժամանակացույցերը:

● Բաժնի կողմից մշակվեց և Ընկերության ղեկավարությանը ներկայացվեց ԿԱԵ գոտու ՄՌԿ ղեկավարների ժողովի ընթացքում ներկայացվող Ընկերության աշխատողների առողջության և անվտանգության ապահովման մասով Ընկերության կողմից վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում ԱՊՄ-ների, ԿՊՄ-ների և այլ օժանդակ միջոցների կիրառման փորձի փոխանակման վերաբերյալ պրեզենտացիայի նյութը:

### 5.2 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻՆ-Ի, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ և ՏԻՄԵՐԻ ՀԵՏ

● «Հարավ» շահագործման տնօնության «Կենտրոն» շահագործման տեղամասը, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցեց սույն թվականի մարտի 1-ին Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում նախատեսվող «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստական աշխատանքներին:


### 5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Բաժինը, ղեկավարվելով ընկերության գլխավոր տնօրենի 24 հունվարի 2022թ-ի N 02 Լ հրամանի և հրամանով հաստատված կարգի պահանջներով, ելնելով ադմինիստրատիվ կառավարման որակի բարելավման շարունակականության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների կողմից ժամանակի կառավարման հմտությունների լավացման և իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման պահանջներից Ընկերության Գործառնական տնօրինության Ջրի որակի վարչության թվով 14 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Ժամանակի կառավարման գործիքակազմ» թեմայով առկա դասընթացը:




● Բաժինը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի, 248-րդ հոդվածի, 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 25-ը սեպտեմբերի 2008 թվականի N 1083-Ն որոշմամբ հաստատված «Շոգու՝ մինչև 0,07 ՄՊա ճնշման շոգեկաթսաների, ջրի՝ մինչև 388 Կ ջերմաստիճանի ջրատաքացուցիչ կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի ու անվտանգ շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգի դրույթներով և Վեոլիա Գրուպի «Փակ տարածքներում աշխատանքի անվտանգությանը ներկայացվող բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի» պահանջներով, և հիմք ընդունելով Ընկերության «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և ադմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, ընկերության Կաթսայական տեղակայանքները շահագործող թվով 4 պատասխանատուի համար կազմակերպեց և իրականացրեց

- ▶ «Կաթսայական տեղակայանքի սարքվածքի զննման ել սարքին վիճակի պատասխանատու անձի» հեռավար դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքներում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջները,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» 3 մոդուլից բաղկացած մասնագիտական որակավորման հեռավար դասընթացները և գիտելիքների ստուգումը:



Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացների մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարները կրեցին դիմակներ:

**2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՄԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ**



## 5.4. ԲՈՒԺՁՆՆՈՒՄ


● Բաժինը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 15/07/2004 թվականի N1089-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հաշվետու ամսում պայմանագրային հիմունքներով Դիլիջանի բժշկական կենտրոնում կազմակերպեց արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վստասկար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող Ընկերության թվով 68 աշխատողի համար բժշկական գնումներ (թերապևտի, նյարդաբանի, ակնաբույժի օտոլարինգոլոգի մաշկաբանի մոտ) և հետազոտություններ (ֆյուրոնկարահնում):

## 5.5. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 1 քլորակայանում, 1 ՋՄԿ-ում, 1 կաթսայատանը և 2 վարչական շենքում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության թվով 17 ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

### 2022 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am